

**Հիմնանորոգվում է Գառնի-Գեղարդի վանք հանրապետական
նշանակության ավտոճանապարհի 6 կմ հատված. մարզպետը
շինհրապարակում էր**

Ընթացքի մեջ են Երևան-Գառնի-Գեղարդի վանք հանրապետական նշանակության ավտոճանապարհի 6 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքները:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի հատկացումներով:

Այս ճանապարհն անցնում է Գառնի, Գողթ բնակավայրերով և տանում դեպի Գեղարդի վանական համալիր:

Աշխատանքներին տեղում ծանոթանալու նպատակով Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանի, ճանապարհաշինարարների հետ այցելել են շինհրապարակ:

Մարզպետը և նախարարը դիտարկել են նաև նույն հատվածում կառուցված ջրահեռացման նոր համակարգերը, որտեղ խնդիրներ են հայտնաբերվել:

Շինարարների հետ տեղում քննարկվել է խնդրի լուծման տարբերակները, տրվել են համապատասխան ցուցումներ: